




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

371

4-78

2802-7

№ 10 ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 10

ԿՈՐՆԵԼՈՎ, ԳԵՐՆԵ, ՈՐԼՈՎԱ

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

== ՅԵՐԵՒԱՆ ==

Թարգմ. Մ. Բոճաղյանի



371  
4-78

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՒԱՆ 1926

№ 10 ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 10

ԿՈՐՆԻԼՈՎ, ԴԵՐՆԷ, ՈՐԼՈՎԱ

371

4-78

78

Մ. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

== ՅԵՐԵՒԱՆ ==

Թարգմ. Մ. Բուճաղյանի



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1926 թ.

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԵԱՅԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարական յերեխաների հոգեբանությունն ուսումնասիրող իտալական հայտնի մանկավարժ Պ. Լոմբրոզոն ասում է. «Մինչդեռ ունեւոր դասի յերեխաների ուսումնասիրությունը ամբողջ գրադարաններ է կազմում, պրոլետարական յերեխաներին վերաբերող տեղեկությունները բոլորովին աղքատ են ու աչառու, — և այդ հասկանալի յէ, պրոլետարական յերեխաների մասին յեղած տեղեկություններն այնքան աննշան են, վոր պրոլետարական յերեխայի ամբողջ պատկերը տալու համար կաթիլներով պետք է հավաքել: Ստեղծելով այդ պատկերն անհրաժեշտ է յելնել նրանից, վոր պրոլետարական յերեխան ուրույն սպեցիֆիկ պայմանների արգասիք է և վորովհետեւ պրոլետարական աշխարհը մի ընդհանուր բան ունի իր սոցիալական տնտեսական դրությամբ, բոլոր կողմերում ստեղծել է մարդկային հատուկ տիպեր՝ միատեսակ աշխարհայեցողությամբ. պարզ է, վոր այդ պրոլետարական յերեխաներն իբրեւ ուրույն պայմանների արգասիք, իրենց հոգեկան աշխարհում

պետք ե հայտնաբերեն վոչ միայն ընդհանուր, այլ և սպեցիֆիկ՝ նրանց սոցիալական դրութիւնը վորոշող՝ սոսանձնահատկութիւններ: Կյանքում պրոլետարական յերեխային նայելով, բնականաբար, մենք նկատում ենք՝ առաջինը, վոր աչքի յե ընկնում, այդ այն ե, վոր յերեխայի մարմինը և հոգին յենթակա յեն մի շարք սոցիալական աննպաստ պայմաններ: Այդ յերեխաներն ապրում են մեծ քաղաքների շրջակայքում, վոչ բարեկեցիկ շրջաններում ու թաղամասերում, վորտեղ վատ ստահատակ փողոցներից բարձրացող փոշին խառնվում ե գործարանների հափիտյան ծխացող վիթխարի խողովակների ծրխին, թունավորում շրջակա ամբողջ մթնոլորտը: Անճոռնի կերպով ձգված թաղամասերը ծուռը փողոցներով ու նրբանցքներով միմիանց առաջ կտրած մութ տնակներով, ամեն հարմարութիւններից զրկված, ահա այդ յերեխաների բնակարանները. ցածր են նրանք, փոքր և մուսլ: Բնակարանները հաճախ բաղկացած են մի սենյակից, վորի մեջ տեղավորվում ե բազմամարդ ընտանիքը. մի մահճակալի վրա հաճախ բնում են մի քանի մարդ. դրա համար ել միանգամայն հասկանալի յեն դառնում այդ ընտանիքի յերեխային ուսումնասիրող շվեյցարական հետազոտող Ռ. Չուդի-ի անկեաների արդյունքները.

յերեխաներին տված հետևյալ հարցին՝ «Ի՞նչ եքո ամենամեծ ցանկութիւնը» — պատասխանը ստացել ե. «Ունենալ մի փոքրիկ տուն, վորը սարի վրա կանգնած լիներ, ծառերով ստվերավորված», կամ՝ «Ունենալ իր մահճակալը, վոր գիշերը վոչ վոք չխանգարեր» և այլն:

Այդ յերեխաների ծնողներն ամբողջ ուրը գործարանումն են անցկացնում, յերեխաներին թողնելով առանց խնամքի և փողոցի գայթակղեցնող ապականիչ ազդեցութիւնների տակ, կամ թե չե ծանրաբեռնում են նրանց ուժից վեր տնային աշխատանքներով: Ահա բնականից վերցրած պատկերներ, վոր մեզ համար նկարում ե իտալացի հետազոտող Լոմբրոզոն, փոքրիկ պրոլետարների կյանքից: «Ձեր առաջ ե ահա 6 տարեկան տղան, շատ խելացի, վորին մայրը թողնում ե տանը՝ փոքրիկ ծծկեր քրոջը նայելու. և այդ փոքրիկը կարողանում ե մանկան ծծակ (սոսկա) և կաթնապուր տալ, վառել ճրագը՝ կաթը տաքացնելու համար»: «Ահա ինչը տարեկան մի աղջիկ, վորի խնամքի տակ են մնացել յերեք յեղբայր կարմրուկով հիվանդ. հայրը բանտումն ե, մայրն առավոտից մինչև յերեկո աշխատում ե գործարանում, միայն կես ուրին կարող ե գալ և չորս ամսական յերեխային կրծքով կերակրել. այսպես մանուկն ամ-

բողջ ուր իննը տարեկան քրոջն է հանձնված, վորը նրան բարուրում է և կերակրում: Այդ աղջիկը գրել կարդալ չգիտե, վորովհետև միայն 5—6 ամիս կարող եր դպրոց հաճախել: «Յերեք տարի առաջ նա դպրոց եր հաճախում, բայց հետո ստիպված յեղավ տանը մնալ և քրոջը խնամել: Իսկ յերբ յերեխային մանկատուն ուղարկեցին, մի քանի ամսից հետո ստիպված յեղավ մյուս քրոջը խնամել: Իգուր չեր ասում այդ աղջիկը, վոր բակ չեր դուրս գալիս, թեպետ խաղալ շատ կրցանկանար»: Այստեղից միանգամայն հասկանալի յե այն փաստը, վոր պրոլետարական յերեխաները յերգեր քիչ գիտեն, քիչ՝ հեքյաթներ ու խաղեր: Ծանր աշխատանք, միշտ զբաղված լինել, հանգստություն և խաղ չունենալ. — ահա այդ յերեխաների թըշվառ վիճակը, մանավանդ աղջիկների:

Նրանք ամենևին չեն գտնադասվում աշխատանքից, և դեռ զգում են, թե ինչպիսի բեռ են աշխատանքից հոգնած ու տանջված ծնողների համար. ընդհակառակը նրանք յեռանդով են աշխատում ու դեռ ցանկանում են ծնողների աշխատանքը թեթևացնել: Չուղի-ի շվեյցարական պրոլետարական յերեխաների վերաբերյալ ընդարձակ անկեաները հետևյալ պատկերն են ներկայացնում. «Ինչ է իմ սիրելի զբաղմունքը»

հարցի պատասխանները հետևյալ բնույթն են կրել. «Սենյակ հավաքելն ու մաքրելն է իմ սիրելի զբաղմունքը, վորովհետև զբանով իմ մորս ուրախությունն եմ պատճառում. ինչպես կուրախանա մայրիկս, յերբ նա մի քիչ հանգստանալ կըկարողանա»: «Իմ ամենասիրելի զբաղմունքն է ընթերիք պատրաստելը, վոր հոգնած ծնողներս կարողանան սեղան նստել»: «Յերբ յես փոքր եյի, տեսնում եյի, թե ինչպես մեծ յերեխաներն ոգնում են իրենց ծնողներին. այժմ յես մեծ եմ և կարող եմ մայրիկիս նեցուկ լինել»: «Յես ուրախ եմ, վոր կարողանում եմ ապել. — մայրիկ, թող յես հավաքեմ և կարգի բերեմ սենյակը. յերբ գործը վերջացնելուց հետո նայում եմ մորս յերեսին, ուրախության արտահայտությունն եմ նկատում նրա դեմքին. այդ մի մեծ վարձատրությունն է, և յես յերջանիկ եմ այդ րոպեյին»: «Յերբ յես աշխատավարձ ստանում և տալիս եմ հորս, նա շատ է ուրախանում»: «Յես պետք է անեմ, ինչ վոր ինձ հրամայում են. յես պետք է ոգնեմ ծնողներիս, վորտեղ վոր կարող եմ, վոր բեռ չլինեմ նրանց համար»: Այսպես են անկեաների ճշդ մեծամասնության պատասխանները. պրոլետարական յերեխաները հասկանում են, վոր իրենք պարտավոր են աշխատել. պարտաճանաչության և

բարոյական պարտքի զգացմունքից դուրս չէ՝ իրենց վրա դրված աշխատանքները սիրով են կատարում, թեև ծնողները հաճախ շատ անգուլթ են յերեխաների նկատմամբ։ Այսպես՝ Մոսկվայի յերեխաներին ուսումնասիրող ուսուցչուհիներն իմեալը, վոր ուսումնասիրել է տարրական դրուրոց հաճախող յերեխաների ընտանեկան դրությունը, յեկել են այն յեզրակացության, վոր յերեխաները ճնշվում են վորեւէ դեպք պատմել իրենց կյանքից. — մասնաւորապէս միայն — հիվանդությունը, ծնողների ծեծը, վախը, հրդեհ, հոր կատաղությունը և այլն և այլն. և միայն իբրեւ բացառության նշան է յեղել ուրախություն. իսկ յերբ իտալական փոքրիկ պրոլետարներին հարցրել են, թե՝ «Մարդն ամենից վատ ինչ բան կարող է անել, մի բանի յերեխաներ քաշվելով պատասխանել են, ըստ յերեւելթին, կրկնելով սովորած դարձվածքները՝ «Մուտ խոսել»։ իսկ մի քանիսը ավելի պարզ և անկեղծները, պատասխանել են՝ «Սոսի»։ ըստ յերեւելթին նրանք շատ լավ գիտակցել են այն, ինչ ասել են. «Վորովհետեւ յերբ մարդ հարբած է, ծեծում է բոլորին, վատ բաներ է անում, չգիտե, թե ինչ է անում. բոլոր փողերը վերցնում է իրեն, վոչինչ չի թողնում տանը»։ «Բայց ում ես դու հարբած տեսել»։ միայն մի քիչ տատանվելուց հետո նրանք

պատասխանել են, վոր հարբած տեսել են հորը. իսկ մի տղա՝ «Ում ես նա ամենից շատ սիրում» հարցին՝ պատասխանել է. «Մայրիկիս, վորովհետեւ նա ինձ չի ծեծում»։ — «Իսկ հայրդ ծեծում է» — «Եւ ել ինչպէս»։ «Գուցե դու քեզ վատ ես պահում»։ «Վոչ, յերբ հարբած է լինում, ծեծում է» և դրա համար Լոմբրոզոն ձիշտ է ընդգծում մի բնորոշ մոմենտ, վոր պրոլետարական յերեխային հատուկ է. դա հայտնի փիլիսոփայական վերաբերմունք է դեպի կյանքը. «Նրանցից շատերի համար ընտանեկան կյանքը այնքան էլ հեշտ չէ, և վոչ էլ քաղցր»։ Նրանց հետ վատ են վարվում, ծեծում են և արհամարում, սակայն նրանք չեն գանգատվում, և բնական են համարում այդ բոլորը. կարծես նրանք զգում են, վոր իրենք ծանրացած են ծնողների վրա, և վոր նրանք կարող են զայրուլթի բռնել վատ վերաբերմունքով դեպի յերեխաները, հանգստացնել իրենց։ Տանջված յերեխաներն անզամ, սովորաբար, չեն գանգատվում ծնողներից։

Նյութական աննպաստ պայմանների և ծանր աշխատանքի շնորհիվ նրանց ֆիզիքականի զարգացումն աննորմալ է։ Վատ են սնվում, զրկված են մաքուր, առողջարար օդից, արեւից զուրկ բույսի պես գունատ են և շատ ձգված դեպի վեր՝ փոխանակ ամբանալու. նրանց քաշը,

կրծքի լախությունը, գլխի շրջադիծը, մկաններ-  
ի ույժը, բոլորը նորմայից ցած թվեր են ցույց  
տալիս, ունևոր դասակարգի յերեխաների ֆիզի-  
քական զարգացման առանձին տվյալների համե-  
մատությամբ: Պրոլետարական յերեխաների հի-  
վանդություններն ու մահացության դեպքերը  
շատ են: Շատ մեծ է և վնասված վերջավորու-  
թյուններով յերեխաների թիվը, վորի պատճառը  
հսկողության բացակայությունն է: Այսպիսով  
փոքրիկ պրոլետարի մարմինն ու կյանքն ամ-  
բողջովին նյութական աննպաստ պայմաններում  
է գտնվում: Սրանից հետևում է այն, վոր նրա  
լնավորության մեջ նկատվում է ինքնապաշտ-  
պանության ձգտում, նյութական բարիքների  
տիրանալու և խնայողության համար ուժեղ  
զարգացած կամք է հայտնաբերում:

Յերբ Լոմբրոզոն իտալական փոքրիկ պրո-  
լետարներին հարցնում էր, թե ինչն է նրանց  
ամենից շատ դուր գալիս, նրանք պատասխա-  
նում էին, վոր մեկին դուր է գալիս «Բարի-  
կենդանը, յերբ յես կարկանդակ էյի ուտում».  
մյուսին՝ «Ասկակե խուփերի տակ զրված հացին».  
ու թխվածքներին նայել».  
յերրորդին՝ «Զվաճեղ  
ուտել» և այլն:

Զուգի-ի անկեաններում ել նույն մոտիվներն  
են նկատվում. «Յես կուզենայի վերարկու, զըլ-

խարկ և շոր առնել, վորովհետև դրանք շատ ան-  
հրաժեշտ են ինձ»: «Յես կառնեյի մի շոր, մի  
գույգ կոշիկ, իսկ ֆացածը կըմացնեյի դրամար-  
կըդ»: «Յեթե յես շատ փող ունենայի, կըմացը-  
նեյի խնայողական դրամարկդ և մայրիկիս կա-  
սեյի. մայրիկ, այժմ դու կարող ես չաշխատել.  
տես, յես դրամարկդում փող ունեմ, նրանք մի-  
այն քեզ են պատկանում. դու ծերության ժա-  
մանակ կարող ես հանգիստ լինել»: «Յես փող  
կըմացնեմ դրամարկդ, յերբ մեծանամ և կարի-  
քի մեջ լինեմ, խնայված գումար կուռնենամ»: «Յես  
հանգիստ ծերություն եմ ուզում ունենալ  
և հաճելի վախճան իմ կյանքին»: Պրոլետարական  
յերեխաների այս վաղաժամ ձգտումը, ապահո-  
վել իրեն ծերության և հիվանդ ժամանակ, ան-  
շուշտ իրենց կյանքի ծանր պայմանների և ի-  
րենց ծեր ծնողների ծանր դրության արդյունք  
են. սակայն սա քիչ է. ինքնապաշտպանության  
քնազդը, վոր պրոլետ յերեխային մղում է դե-  
պի ինքնապաշտպանություն և խնայողություն,  
նյութական բարիքներին տիրանալու: Այս բնազ-  
դը արժեքավոր յերևութի սկիզբ է, պրոլետա-  
րական յերեխայի հոգու մեջ. նա շոյում է նրա  
հոգում պրոլետարական հպարտության սերմը,  
վորը միշտ ապրում է նվաստացածների և ան-  
արդվածների մեջ: Նյութական բարիքները վոչ

Թե ուրախության, կյանքը վայելելու համար ե, վոչ ել ծնողներին կամ իրեն ապահովելու, ծերության կարիքների համար, այլ իրեն ազատ և անկախ զգալու, ունեւորների առաջ, չքավորության լծի տակ չնվաստանալու համար ե։ Ուղղակի ապշում ես՝ կարդալով մանուկների այս պատասխանները։ Ինչպես վաղ և վորքան ցավագին են զգում այդ նվաստացումն ունեւոր աշխարհի առաջ։

«Կան յերեխաներ, վոր իրենց ստացած փողն ամբողջապես ծախսում են. յես այդ չեմ հասկանում. հետո նրանք վոչինչ չեն ունենում. հիվանդության և կարիքի ժամանակ պետք ե նվաստանան. յես ուզում եմ իմ փողերը տետեսել. յես կանեմ այն, ինչ վոր կարող եմ, միայն վերջը չնվաստանամ»։ Այսպիսով ինքնապաշտպանության բնազդը պրոլետ յերեխաների մեջ կուլիտ մատերիալիզմի բնույթ չի կրում, վորովհետեւ կերակրի, հագուստի և բնակարան ունենալու ցանկությունների շարքում՝ նրանք նույնպես բուռն ցանկությամբ ձգտում են պաշտպանել իրենց անկախությունը և մարդկային արժանապատվությունը։

Պրոլետարական յերեխայի սպեցիֆիկ միջավայրը և ֆիզիքական կյանքի աննպաստ պայմանները նրա մեջ ստեղծում են ուրույն հոգի.

այդ հոգին ել, ինչպես և մարմինը, յենթակա յե նույն աննպաստ պայմաններին։ Բնությունից կտրված, տան, բակի և փողոցի նեղ շրջանակում կղզիացած լինելը յերեխայի մտավոր զարգացմանը քիչ են նպաստում՝ նրա մտավոր հորիզոնի լայնացման նկատմամբ։ Մտավոր այդ հորիզոնն այնքան նեղ ե, վոր ութ տարեկան պրոլետարական յերեխան հաճախ դպրոց ե դալիս նույնիսկ առանց ամենատարրական գիտելիքների պաշարի։ Հաճախ պատահում ե, վոր յերեխան անտառ չի տեսել, դաշտ, բանջարանոց, կով, վոչխար չի տեսել. չի կարող մի ձրկան անուն ասել, չգիտե կատուն քանի թաթ ունի, թե՛ սելյոդկան ձուկ ե, ասում ե՝ «նա ապրում ե հողի մեջ, նրան բռնում են բանջարանոցում»։ չի կարող ասել, թե վոհրն ե մեծ՝ աղավնին թե ճնճուկը. այն հարցին, թե՛ կաթն ինչպես ե ստացվում, պատասխանում ե՝ «կաթնատնից են վերցնում»։ — Իսկ հացը — «Փռումն են թխում»։ հեռագիրը նրա համար, փողոցում կանգնեցրած սյուներն են, վորոնց վրայով լարեր են անցկացնում, և վորոնց վրա թռչուններն են նստում։

Մի խոսքով, պրոլետարական յերեխայի համար բնությունը մի անտեսանելի աշխարհ ե. հնարավորություն ել չկա, վոր նա իր մտաշըր-

Ջանը կարդալով լայնացնի, վորովհետև գիրք չը-  
կա, չկա մի ազատ անկյուն, վոչ միայն սենյա-  
կում, այլև սեղանի վրա, վորտեղ կարելի լինե-  
ր գիրք դնել: Բնության դիտողությունները և հե-  
տադատությունները չի կարելի գրքով կամ ուրի-  
շի դիտողությունների և փորձերի հետևանքները  
հաշվի առնել: չի կարելի հույսը դնել ղեկավար-  
ների վրա—նրանք չկան: Մի յերեխա, վոր ին-  
քըն իրեն ե թողնված, նրա—միակ ճանապարհն  
ե՝ ապրելով սովորել: այսինքն կյանքի պայման-  
ներն հաշվի առնելով, ձգտել հարմարեցնել սե-  
փական գոյության պայմաններին և փոխադար-  
ձաբար հարմարվել նրանց: Պրոլետար յերեխայի  
մեջ այդ ստեղծում ե կորովամտություն (ճար-  
պիկություն), հնարագիտություն, սրամտու-  
թյուն, գծեր, վորոնք միասին կողք կողքի չեն  
լինում ունևոր դասի յերեխաների մեջ: Ծիշտ ե,  
վոր չքավորության և մտավոր նեղ հորիզոնի մեջ  
պրոլետարական յերեխայի միտքը տառապում ե  
միակողմանի դատողությամբ և նեղ գործնակա-  
նությամբ: Ուշադրությամբ հետևեցեք պրոլե-  
տար յերեխայի անկետային պատասխաններին,  
դուք կըտեսնեք, վոր նույն իսկ այնպիսի հար-  
ցերի պատասխանների մեջ, վորոնք իդեալական  
խնդիրներ են շոշափում, աչքի յե ընկնում մի  
միտք, վորը ժամանակակից պրոլետարիատի

կյանքն ե առաջ բերել և վաղորդ պատվաստել  
պրոլետար յերեխայի մեջ: դա չքավորության,  
կարիքի և հոգսի դեմ մղվող պայքարն ե, վորը  
ձգտում ե ոգնել նվաստացածներին ու անարգ-  
վածներին: Այստեղ ապարդյուն ե փնտել պա-  
տասխաններ՝ «Հայրենիքի ազատագրության»,  
«Հասարակությանը ծառայելու» մասին, վոր հա-  
ճախ պատահում ե ինտելիգենցիայի յերեխանե-  
րի պատասխանների մեջ: այստեղ այդ հարցերը  
հատ ու կենտ են: Սոցիալական խնդրի հիմնա-  
կան լուծումը—չքավորության պրոբլեմները,—  
ահա թե ինչ ե պրոլետար յերեխայի ամբողջ  
ուշադրությունը գրավում: Կարգացեք Չուդի-ի  
անկետների հարյուրավոր պատասխանները, դուք  
այնտեղ կըգտնեք միևնույն մտախմբերը. «Ոգ-  
նել աղքատներին, հիվանդներին»: «Ամեն մի յե-  
րեխայի հաց տալ, ով չունի»: Պրոլետարիատի  
յերեխան այս գրավականներով սոցիալիստ ե,  
վորին ծնել ե միջավայրը, և մինչդեռ նրա մը-  
տավոր հորիզոնն այդքան նեղ ե բնագիտության  
սահմաններում, բավականին լայն ե սոցիալա-  
կան հասկացողությունների սահմաններում: Այն  
հարցին, թե «ինչ ե աղքատությունը», մանկա-  
պարտեզի 3 տարեկան յերեխան հիանալի պա-  
տասխան ե տվել, պարզ վորոշելով, «Այն ե, վոր  
չի ճաշում», «Խեղճ գինվորներին գնդակահա-

րում են», ասում է 5 տարեկան տղան 1914 թվականին. «Ինչ է նախանձը հարցին պատասխանել է 5 տարեկան 8 ամսական աղջիկը — «Ահա մի որիորդ, լավ է հագնված. իսկ մի ուրիշը՝ վատ. վատ հագնվածը նախանձուկ է ներան»». Ըստ յերևույթին, յերեխաներն այս բոլորը վոչ թե գրքի խոսքերից են ըմբռնել, այլ իրենք ապրել են գործնականապես, վոր այդքան ծանոթ են նրանց։

Ինչ վերաբերում է պրոլետ յերեխայի զգա-  
ցողությունը, այդ նույնպես պայմանավորվում  
է նրա սոցիալ սնտեսական ղրությունը, ինչպես  
և նրա բանականությունը, այստեղ գերակշռում  
են նույն մոտիվները, վորոնցով սնված է նրա  
միտքը: Աղքատությունը և այստեղից բղխող  
հաճախ անընդհատ և ուշից վեր աշխատանքը,  
յերբեմնակի միանգամայն անխնամ թողնելը և  
կիսաարհամարական վերաբերմունքը մի կողմից  
պրոլետարիատի յերեխաներից մանկական հա-  
սակում խլում են անհրաժեշտ սերը, հոգատա-  
րությունը և նրա ճանապարհը դարձնում մոայլ  
և զուրկ ուրախությունից: Ավելի պարզ բնու-  
թագիր չի հարկավոր, քան Մոսկվայի ուսուց-  
չունիների կատարած դիտողությունները տար-  
րական դպրոցականներին հարցաքննելիս. 100-ից  
70 դեպք յերեխաները նշանակել են դժբախտու-

թյուն, և իրայն յերկուստեքդուս նշանակված  
է յեղել ուրախություն, բավականություն: Ու-  
րախության բացակայությունը պրոլետս յերեխա-  
յին զրկում է մեղմությունից. նա կզգիացած է,  
ուրիշներին հավատ չի ընծայում, խիստ է իր  
զգացմունքների արտահայտության մեջ. նա նա-  
յում է իր չորս կողմը, ամենափոքր անսիրալիր  
վերաբերմունքի համար պատրաստ է բարկանա-  
լու և նույնիսկ խիստ կծուտելու: Բայց նրա վաշ  
զրավիչ (անհրապույր) արտաբերնի տակ ջերմ  
սիրտ է բաբախում, խորը զգացմունքով սուգոր-  
ված դեպի բոլոր տանջվածներն ու թշվառները:  
Յեթե դուք նայեք անկետները, անկախ  
այն բանից, թե նրանք վերաբերվում են «բար-  
ձրը ցանկությունների», «ազնիվ գործի» կամ  
«սիրելի զբաղմունքի», դուք ամեն տեղ կը տես-  
նեք միևնույն մոտիվները, — ցանկություններ —  
ուզնել այնտեղ, վրտեղ կարիքն ու հոգան են  
իշխում, ուզնել ծնողներին, բոլոր թշվառներին,  
մանավանդ յերեխաներին: «Յեթե յես հարուստ  
լինեյի, յես կըսկահեյի իմ բարի ծնողներին, կա-  
րիքից կազատեյի նույնպես աղքատ յերեխանե-  
րին». «Յես կուզեյի, վոր պատերազմը շուտ  
վերջանար. նա այնքան է յերկարել, վոր շատե-  
րն աղքատացան. մեր հայրերն ու յեղբայրները  
չեն վերադառնում հարազատների մօտ. ինչքան

$$\begin{array}{r} 1004 \\ 16163 \end{array}$$

շատ են գործազուրկները. ինչպես յերջանիկ  
կըլինեյինք մենք, վոր խաղաղությունը վերա-  
կանգնեը: «Յես ինձ մոտ կընդունեյի բոլոր  
այն յերեխաներին, վորոնք ծնողներ չունեն. յես  
կըմտածեյի նրանց մասին, վոր կուշտ լինեն և  
հագնված, վորովհետև յես գիտեմ, թե վորքան  
ծանր է ծնողներից զրկվելը»: Այսպիսով ապրել  
և ոգնել—այս է պրոլետարական յերեխայի պա-  
հանջը, կարեկցությունն է նրա հոգու հիմնական  
հատկանիշը:

Բայց վոչ բանականությունը, վոչ ել զգացու-  
ղության շրջանը (սֆերա) պրոլետարական յե-  
րեխային չեն բնորոշում այնպես, ինչպես նրա  
կազմակերպված և տոկուն կամքը: Մանկության  
հասակում ծանր պայմաններում ապրելով, ծան-  
րաբեռնված լուրջ և պատասխանատու աշխա-  
տանքով, վաղաժամ ինքն իրեն թողնված, պրո-  
լետար յերեխան անցնում է կյանքի պայքարի  
դաժան շկուտն, վորը նրան կամ կործանում է  
և այլանդակում, Ֆիզիքապես և բարոյապես,  
կամ թե չէ դուրս է բերում նրան համարձակ,  
վճռական, համառ իրեն ձեռք-բերումների մեջ և  
վերին աստիճանի ինքնագուսպ տանջանքի մեջ:  
Պրոլետարական միջավայրը զիմացկուն է դար-  
ձնում մեկին և կորստյան դատապարտում մյուս-  
սին, այդ ցույց է տալիս հսկայական քանակու-

թյամբ ալանդակ դեպքերի աճումը, ինչպես՝ յե-  
րեխաների պոռնիկությունն ու հանցագործու-  
թյունը:

Աղքատությունը և նրա հետ կապված հըս-  
կողության բացակայությունը, ահա այն պայ-  
մանները, վորոնց շնորհիվ փոքրիկ պրոլետարը  
քաղցած է և վատ հագնված, այդ ժամանակ  
մեծ քաղաքների փողոցի կյանքը նրա համար  
անխուսափելի յէ իր գայթակղություններով  
և վորքան գործարանը դեպի իրեն է ձգում  
հայրերին և զլիսավորապես մայրերին, այնքան  
պրոլետար յերեխաների համար անխնամության  
և վոչնչացման միջոցներ են ծնվում: Սակայն  
նրանք, վորոնցից ծայրահեղ թշվառության բա-  
ժակը անցած է, բացառապես կազմակերպվող  
կայուն կամքի իմաստով զնահատելի նյութ են  
հանդիսանում: Մնում է նրա այդ կամքին բա-  
րոյական բնույթ տալ, սա այն գրավականն է,  
վոր պրոլետարական յերեխան սոցիալական կյան-  
քի համար ամենապետքականը կըլինի. այդ անե-  
լու համար մեծ աշխատանք չի պահանջվում,  
վորովհետև պրոլետար յերեխայի կամքի բարո-  
յական ուղղության զրավականը ակնհայտ է:

Հիրավի, արժե նայել յերեխաների պատաս-  
խանները «գեղեցիկ և աղնիվ գործ»-ի մասին  
յեղած անկեանքում, տեսնելու համար, վոր

պրօլետար յերեխայի կամքն ուղղված է դեպի մի գործ՝ «ոգնել բոլոր թշվառներին ու տանջվածներին»։ «Իմ կարծիքով ազնիվ գործ է հաց տալ այն յերեխային, վորը չունի»։ «Իմ ազնիվ ձգտումն է՝ ոգնել աղքատներին ու հիվանդներին»։ «Ոգնել ծնողներին—ահա ամենագեղեցիկ գործը։ Նրանք հոգում են մեր ուտելիքի և հագուստի մասին։ Եթե հացը չի բավականացնում, մայրիկը մեզ յերեխաներիս է տալիս յեղածը։ Դրա համար յես ուզում եմ, վոր ծնողներս յերկար ապրեն, ուզում եմ ոգնել նրանց և ծերության ժամանակ նրանց նեցուկը լինել», և այլն։ Մի խոսքով ցանկություն՝ ոգնել այնտեղ, վորտեղ կարիքն ու հոգան են թագավորում, ձգտում՝ ազատել այն բոլորից, վորը նվաստացնում է մարդու հոգին, թշվառների կյանքը լուսավորել—ահա ազնիվ գործ՝ պրօլետարական յերեխայի հասկացողությամբ։

Պրօլետար յերեխան պատկերանում է մեզ հետեյալ կերպով։ Խաղալիքն անհամապատասխան բարձրահասակ, վատ սնված և աղքատ հագնված, գունատ, լուրջ և մտածկոտ դեմքով, կյանքից կտրված ունեւոր աշխարհի վրա անհարազատ աչքով է նայում և կիսաարհամարանքով վերաբերվում։ հանգիստ կերպով է ընդունում նրանց հարվածները, բայց սրտում պահում է

իրեւ սրբություն։ սա յե պրօլետարական հրպարություն այն սերմը, վորին նվաստանալն ու ստրկանալն ոտար է։ Նա ոժտված է համարձակ խելքով, ճարպկությամբ և հնարագիտությամբ։ Թեպետ գործնականը նեղ է և միակողմանի, բայց կյանքի ծանր պայմաններում կոչված է սոցիալական հիմնական խնդիրը—աղքատության պրօլեմները լուծելու։

Զրկված լինելով սիրուց, ուրախությունից, դեպի ինքն ունեցած խնամքից, հաճախ կատաղի յե և սուր իր զգացմունքներն արտահայտելու դեպքում։ արտաքինով չոր է, և անհրապույր սակայն տաք սիրտ է բաբախում նրա կրծքի տակ և լի յե կարեկցությամբ դեպի բոլոր նըվաստացածներն ու անարգվածներն։ Աշխատանքի մեջ է կոփվում նրա կայուն կամքը, հանդուգն է իրեն ձեռքբերումների մեջ։ սակայն կյանքի դաժան պայմաններում բարոյապես ընկճվում է։ բայց իրա տանջանքների մեջ ինքնագույն է, փիլիսոփայական սառը դատողութամբ տանում է կյանքի ծանր խաչը։

Այսպես է պրօլետարական յերեխայի հոգեբանությունը, վորը նա արտահայտում է սեփական բառերով, վերջին ժամանակներում կատարված ուսումնասիրությունների համաձայն։

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԵՄԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

«Պրոլետարական կամ կոմունիստական դաստիարակություն» լոգունգի տակ կարելի չէ շատ կոպիտ սխալներ անել, վոր իսկապես մի քանի տեղեր արվել են, վորովհետեւ, ինչատի չեն ունեցել, վոր պրոլետարական յերեխայի դաստիարակությունը, բացի նպատակից, կախումն ունի ուրիշ մեծ ֆակտորից—մանկան բնությունից: Դաստիարակը գործ ունի կենդանի նյութի հետ: Ամեն մի արհեստավոր թե արվեստագետ պետք է նախորդ ուսումնասիրի մշակվող նյութը, հարմարվի նրան, վորպեսզի կարողանա նրան վորոշ ձև տալ,—մանավանդ դաստիարակը, վորը գործ ունի կենդանի մարդկանց հետ, և մանավանդ կոմունիստական դաստիարակը, վորը առանց վորեւէ արտաքին հարկադրական միջոցների չէ աշխատում, և վորի համար ամենից կարևորն է, վոր նա յերեխայի մեջ արթնացնի նրա բոլոր ուժերը:

Բայց յերեխան չի մեծանում անող տարածություն մեջ. նա մեծանում է հասարակական

վորոշ հարաբերությունների մեջ, վորոնք ազդում են նրա բնավորության վրա և փոխում նրան: Պրոլետարական յերեխան այն չէ, ինչ վոր բուրժուականը: Բուրժուական պատանինների ուսումնասիրությունը աչքաթող է անում այս փաստը, իսկ մեզ համար շատ մեծ նշանակություն ունի:

Չենց այդպես էլ դաստիարակն է գործում հասարակական հարաբերությունների մեջ, վորոնք, վորոշում են նրա մանկավարժական տեսակետները, մեթոդները և հնարավորությունները: Պրոլետարական դաստիարակը բուրժուականից տարբերվում է իր դասակարգային դրությամբ, կրթությամբ, աշխարհայացքով և պրոլետարական յերեխայի հետ ունեցած կապով: Այս հանգամանքը շատ է դյուրացնում յերեխային ճանաչելու գործը և նրան կարում ուրիշի հեղինակությունից և հարկադրական միջոցներից: Բուրժուական դասատուի նպատակն է պրոլետարական յերեխայի վզին փաթաթել նրա դասակարգային շահերին և ամենորյա փորձերին հակասող իդեոլոգիա, մինչդեռ պրոլետարական ուսուցիչը միայն ոգնում է յերեխային հավաքել, լրացնել և ձեվակերպել իր սեփական փորձը: Պրոլետարիատի մեծերի և պրոլետարական յերեխաների շահերի մեջ հակասություն չկա:

դրա համար ել մենք հանգիստ սրտով կարող ենք հրաժարվել զիտնական-մասնագետ մանկավարժներից և դաստիարակությունը հանձնել յերիտասարդներին — դեռևս չհղկված դաստիարակ-դաստիարակչուհիներին:

Ո՛վ պետք է լինի այդ դաստիարակը: Բուրժուական հասկացողությամբ ծնողները բնականորեն դաստիարակներ են հանգիստանում: Բուրժուական ընտանիքի համար այդ կարող է ճիշտ լինել: Պրոլետարական ընտանիքում ծնողների դաստիարակչական գործը չափազանց աննշան է յերկու պատճառով. նախ՝ վոր կապիտալիզմը քայքայում է պրոլետարական ընտանիքը, հարկադրելով հորն ու մորը հանուն աշխատավարձի աշխատել. և քայքայում է ընտանիքը, վորպես տնտեսական համայնք: Պրոլետարական ընտանիքը ներկայումս հանգիստանում է միայն համակեցության, բնելու և ուտելու մի հիմնարկություն. յերկրորդ՝ պրոլետար ծնողները մեծ մասամբ չեն տիրապետում վոչ հոգեկան և վոչ ել բարոյական ավայրների, վորոնք անհրաժեշտ են իր յերեխայի նպատակահարմար ու ծրագրված (պլանաչափ) դաստիարակության գործը տանելու համար: Հիմնարկության մեջ վարձու ստրկությունը, ապրուստի մշտական հոգսը, քաղաքի կյանքի վողջ անհանգստությունն ու բազմերան-

գությունը վոչ ժամանակ է թողնում, վոչ ել ցանկություն դաստիարակության լուրջ գործը տանելու: Միանգամայն անոգուտ է պրոլետարիատի ընտանեկան դաստիարակության մասին սքանչելի զրքեր զրելը, վորովհետև պրոլետարիատն ընտանեկան կյանք չունի: Վեց որ շաբաթվա մեջ և տաս ժամ ուրական բանվորի յերեխան ինքն իրեն է թողնված, առանց հսկողության, յենթակա շրջապատի անկարգությունների ազդեցության, տան, դպրոցի և փողոցի: Բացի դրանից, հեղափոխական դաստիարակությունը, այսինքն դաստիարակություն դասակարգային պայքարի, դասակարգային համերաշխության, կոլլեկտիվ աշխատանքի համար՝ ուղղակի անհնարին է ընտանիքում, քանի դեռ նա գոյություն ունի: Պրոլետարիատի նոր դաստիարակության համայնքը գտնվում է ընտանիքից դուրս և ընտանիքից վերև: Նրա ղեկավարությունը ծնողական կազմակերպության չի վերապահվում, վորովհետև այստեղ արյունակցությունը վճռական նշանակություն չունի, այլ դիրքը դասակարգային պայքարում: Պրոլետար ծնողները յերեխաների աշխատանքային խմբակների գործում կարող են մասնակցություն ունենալ կողք կողքի, վոչ ծնողների հետ. բայց արդեն վոչ իբրև ծնող, այլ ինչպես պայքարող պրոլետարիատ:

Այսպիսով մեր կոմունիստական խմբակներում դաստիարակներ են հանդիսանում հասարակ պրոլետարներ, առավել ևս յերիտասարդներ, վորոնք դեռևս ապրում են իրենց մարմնի և հոգու զարգացման հիվանդության շրջանը:

Յեղեկով նույն հոգեկան ու սոցիալական խորությունից, ինչպես և բանվորների յերեխաները, նրանք դեռևս իրենք են պայքարում ինքնուրույն աշխարհայեցողություն ձեռք բերելու համար. նրանք վոչ միայն գուրկ են մանկավարժական պատրաստակաությունից, այլ նրանք հաճախ չեն ունենում «որինավոր» դաստիարակություն և դպրոցական կրթություն: Ահա այսպիսի պատանի պրոլետարների հետ միասին մենք հույս ունենք հաղթահարել բուրժուական ամբողջ մանկավարժությունը և կռիվ ըսկսել աշխատանքային և հասարակական դպրոցի համար, հենց դպրոցում:

Մենք չլսված հանդգնություն ենք յերևան բերում, վորն ունի միայն մի դասակարգ, վոր բարձր նպատակի յե ձգտում, միայն պրոլետարիատը, միայն այն կուսակցությունը, վորն այդ դասակարգի գլուխն է անցած, վորը գիտե վոչ միայն նպատակը, այլ և ճանապարհը: Հասկանալի յե բուրժուական ամեն մի դպրոցական գործչի զայրույթը, յերբ նա լսում է, վոր մենք

«խեղճ և անմեղ յերեխաներին» տալված հոգեբան մանկավարժի փոխանակ «հանձնում ենք» անփորձ պատանիներին կամ հաղիվ մեծացած գործարանային աղջիկների խնամքին: Սակայն մենք հիմք ունենք այնպես չանել, ինչպես նրանք են կարծում. և մենք փորձով գիտենք, վոր չնայած իրենց բոլոր պակասություններին, մեր պրոլետարական պատանի մանկավարժները վոչ միայն տանում են իրենց գործը, այլև արդարացնում են այն սպասելիքները, վորոնք դրված են նրանց վրա:

Սկզբում անվստահ վերաբերմունք ունելին դեպի մեզ՝ անգամ կուսակցական հասակավոր ընկերները. այժմ մենք ձեռք ենք բերել բանվորության վստահությունը կուսակցության սահմաններից հեռու\*):

\*) Նույն վերաբերմունքն էլինք տեսնում Հայաստանի իրականության մեջ հեղափոխության առաջին տարիներում, յերբ պրոլետարական կազմակերպությունը նոր էր սկսում իր աշխատանքը մեր դպրոցներում, և նման վերաբերմունքը հաճախ ընդհարում էր առաջ բերում փորձված մանկավարժների և անփորձ պատանիների մեջ, յերբ վերջիններս վոզկուրված ժամանակի իդիոլոգիայով ձեռնարկում էին նոր դաստիարակության գործը: Նա այժմ ունի խկապես նոր վոզով ստված պատանի մանկավարժներ, վորոնք արդարացնում են իրանց վրա դրված հույսերը:

Ահում է նոր մանկավարժությունը և նոր մանկավարժները խումբը, — շարունակում է Գերյին:

Մանկավարժություն, վորը ա) ուղղված է պրոլետարական դասակարգի նպատակներին, պայքարում է կոմունիզմի համար, բ) հիմնվում է ուշադիր վերաբերմունքի վրա դեպի յերեխայի բնությունը և նրա զարգացումը:

Թարգմ. ծանոթություն

Հետազոտենք յերեխայի բնությունը. այս-  
տեղ արդեն բուրժուական մանկավարժությունը  
և հոգեբանությունը վորոշ բաներ արել են: Մենք  
գիտենք, վոր յերեխան ամենևին «փոքր հասա-  
կավոր» չէ, այլ միանգամայն հասակավորից  
տարբեր մի արարած, վորն անընդհատ փոփոխ-  
վում է հասակավորի ուղղությամբ. դրա համար  
չի կարելի խոսել յերեխայի բնության մասին  
իբրև ընդմիշտ սահմանված մի սխեմայի: Յերե-  
խայի կյանքը բնութագրվում է ինչպես մի ան-  
ընդհատ հոսանք, մարմնի և հոգու զարգացման  
մի պրոցես. հենց այդ հանգամանքը թույլ չի  
տալիս կարծել, վոր նա մեծին հավասար եակ է:  
Մենք չենք կարող ստիպել մի մարմնի, վո-  
րի որգանները դեռ նուրբ են, վատ զարգացած,  
վոր արագ են աճում, ժամերով նստել միևնույն  
տեղը, ժամերով կատարել վորոշ մի որինակ աշ-  
խատանք: Հենց սրանում է կայանում պետա-  
կան դպրոցի մանկավարժական ուսուցման հան-  
ցագործությունը, վոր յերեխային հարկա-  
դրում է վերոհիշյալ գիրքով նստել գեղազը-  
րական վարժություններ սովորել այն հասակում,  
յերբ ազատ շարժումները, տպավորությունների  
միմիանց հաջորդելը և ուրախ խաղերը, բնական  
անհրաժեշտություն են նրանց համար: Նայեցեք  
(չոշափեցեք) յերեխայի զարկերակը, ինչո՞ւ յե

արագ խփում քան մեծինը. նրա համար, վոր  
յերեխան ներքուստ հսկայական աշխատանք է  
կատարում. աճման աշխատանք, գործարաննե-  
րի բլիշային հյուսվածքի անընդհատ մեծանալն  
ու ամրանալն—ուղեղից սկսած մինչև վոսկրնե-  
րը: Նման տանջանք է յերեխայի համար նրա ու-  
շագրության լարումը ժամերով, պատժի սպար-  
նալիքի տակ պահելով նրան: Յերեխան չի կարող  
յերկար ժամանակ ուշադիր լինել, վորովհետև նա  
ավելի կարևոր գործ ունի, քան բռներ սովո-  
րելը, նախադասություն կազմելը, բազմապատկ-  
ման աղյուսակ հիշելը: Նա պետք է ըմբռնի ար-  
պավորությունների մի ամբողջ աշխարհ, ստեղ-  
ծի մտապատկերների վողջ աշխարհ, սահմանի  
զուգորդիչ գաղափարներ և տպավորի այն՝ հի-  
շողություն մեջ, և ստեղծված գաղափարների  
կոմպլեքսները վերարտադրի, ուղղի, լրացնի:  
Մեր իմաստուն ուսուցիչները չեն պատկերաց-  
նում հոգեկան այն հսկայական աշխատանքը,  
վոր կատարում է «ծուլ» յերեխան, յերբ նա  
«ցրված» նայում է լուսամուտից և հետևում  
ճանճի շարժումներին, և վոչ թե ուսուցչի ցույց  
տվածներին քարտեզի վրա: Մեր դպրոցական ու-  
սուցիչները չգիտեն, թե ինչպիսի գահիճներ են  
հանդիսանում, յերբ պահանջում են յերեխայից  
«հանգիստ նստել», «ուշադրությամբ» լսել, հար-

կազմում են նրան ասած նախադասութիւնները կրկնել, յերբ իրենք դժգոհ են, վոր նա «քնել է»։ Նյարդային և մանկական հիվանդութիւնների մօեն մի բժիշկ գիտե ներկայումս, թե դպրոցական ուսուցման սխտեմը ինչպիսի անբուժելի վնաս է հասցնում յերեխայի նյարդային համակարգութեանը, վոսկրներին և ներքին գործարաններին։ Ամեն մի պրոլետար-հեղափոխական պետք է իմանա, վոր միայն բուրժուական շահախնդիր հաշիվներն են պահում ուսուցման ձևը, վորին բուրժուական գիտութիւնն անգամ խայտառակել է վաղուց և վորը տանջանք է հանդիսանում սովորողների և սովորեցնողների համար։ և զրա համար իր տված արդյունքներով նա համեմատվում է հափշտակութեան պրիմիտիվ ձևելի հետ։

Դժբախտաբար պրոլետար ծնողների մեծ մասը այս փաստերի մասին վոչ մի հասկացութիւն չունի այնպես, ինչպես դպրոցում ուսուցիչները, նրանք ևս անմտորեն են վարվում յերեխաների հետ, «չլսողներին» պատժում են, առանց հաշիվ տալու իրենց, վոր «չլսողները» ներկայանում են յերեխայի բնութեան (природа) ունակցիան իր վրա կրած հասարակական ճնշման հանդեպ։ Վոչ թե յերեխան է չլսող, այլ հասարակութիւնն ու դաստիարակը նրանից անբնական

բան են պահանջում։ Յերեխաների խմբավարը պետք է այս բոլորն ի նկատի ունենա, յերբ նա դառնում է խմբի կարգապահական պրոբլեմներին։ «Զլսողները» կամ վայրենի (ըստ ընդունված արտահայտութեան) պատանիներն ավելի կենսունակ են յերևում, հետեապես ավելի հույս են խոստանում։ Հենց աղջիկները, վորոնց ընդունված է անվանել «մաքուր տղաներ», ներկայանում են վորպես մարդկային լավագույն նյութ՝ մշակման համար։

«Հեշտ է քեզ համար խոսելը», կարող է ասել տանջված տանտիկինը կամ հարյուր յերեխայի աղմուկից ջղայնացած խմբավարը. «շենքի անհարմարութիւնը, ոգնական չունենալը ստիպում են մեզ յերեխաներին լռեցնել։ Յեթե յերեխաներն անհանգիստ են ու անգուսպ, մենք կարող ենք շենքը կորցնել, վորը նշանակում է թե ձըմեռն աշխատանքները դադարեցնել»։ Այս դժվարութիւնները չի կարելի թեթևացնել, նրանք բղխում են բուրժուական իրավակարգի վերաբերմունքից, պրոլետարիատի աղքատութիւնից և ուրիշից կախումն ունենալուց։ Հենց զրա համար ել պահանջում ենք, վոր մեր խմբավարները և նրանց ոգնականները վոչ միայն «դաստիարակներ» լինելին, այլ ամենից առաջ հեղափոխական պայքարողներ, վորոնք կարողանային

յերեխաներին ասել, թե վորտեղից են առաջանում այդ դժվարութիւնները, կարողանային վողկորել նրանց՝ կռվելու ճնշումների դեմ: «Ինչո՞ւ համար մենք պետք է հանգիստ նստենք» թեման կարող է հիանալի միջոց լինել յերեխաների մեջ արթնացնելու հեղափոխական տրամադրութիւն և հեղափոխական կամք և միևնույն ժամանակ գործնականորեն չհարկադրելու, հանգիստը վերականգնելու, ուղղակի ուշադրութիւնը գրավելու և հեղափոխական ղեկավարին զգացողութիւնն արթնացնելու ճանապարհով:

Յերեխայի հաստիւմ նկատուում են հատուկ շրջաններ, վորոնք իսկապէս իրականութեան մեջ աննկատելի յեն անցնում մեկը մյուսին հաջորդելով, և մերթ նայելով յերեխային նրա ցեղային հատկութիւններին, հասարակական միջավայրին և այլն, — ավելի արագ են անցնում, մի ուրիշ դեպքում ավելի դանդաղ. — աղջիկների մեջ մի ձևով է արտահայտվում, տղաների՝ այլ կերպ: Մանուկներին մի կողմ թողնելով, մեր նպատակի համար կոպիտ զծերով կարելի է յերեք խմբի բաժանել: Յերեխան, այսպէս կոչված, նախադպրոցական հասակում, մինչև ատամների փոխելը (7—9) տ., յերեխայի հատուկ հասակ — 9—12 տարիներում և սեռական հասունութեան շրջան՝ 12—15 տարեկան: Մեծ բաղադրում բեր-

ված թվերը հարկավոր է իջեցնել՝ միջակի, փոքր քաղաքի համեմատութեամբ, ընտանիքում ապրող յերեխային բարձրացնել փողոցին հանձնված յերեխայի համեմատութեամբ:

ա) Նախադպրոցական հասակի յերեխան մեծացող (աճող) եյակ է հանգիստանում. նա միայն շուրջն է նայում և իր սկզբնական փորձերն ի մի հավաքում, ձեռք է բերում առաջին պատկերացումները տեղի, ժամանակի, կենդանիների և մարդկանց մասին. սովորում շնչավոր և անշունչ առարկաները միմիանցից տարբերել. զարգացնում է տեսողութեան, հոտառութեան, լսելիքի, շոշափելիքի և ճաշակելիքի զգայարանները: Այստեղ վնչ մի խոսք չի կարող լինել պլանաչափ գործնելութեան, գիտակցութեան ինքն իրեն իշխելու պատճառների և հետեանքների պարզ պատկերացման մասին: Հիշողութիւնը բոլորովին զարգացած չէ. արցունքները ծիծաղի յեն փոխվում, սովորութիւն ունի ընդորինակելու. աննպատակ խաղի շրջանն է այս\*): Իսկ խաղերի մեջ մարդ-

\*) Այս համառոտ տեսութեան մեջ հեղինակը, բնականաբար, չառ մակերեսային կերպով և շոշափում նախադպրոցական հասակի հոգի-ֆիզիքական առանձնահատկութիւնները. յենելով պրոլետարական դաստիարակութեան նպատակներէց և առաջադրած խնդիրներից, մենք չենք պատկերացնում աննպատակ դաստիարակութեան, զբաղմունք կամ վարժութիւններ. այս տեսակետից խաղի բովանդակութիւնը նույնպէս կարեւորութիւն ունի և կարող է իր հիմքում ունենալ աշխատանքային, սոցիալ-դասակարգային մերձեցում:

կանց և կենդանիների ընդօրինակումն ե, գերակշռում: Ամեն մի կարևոր աշխատանք խաղի յե փոխվում և քիչ չի զայրացնում ուսուցչին կամ մտահոգված բանվորուհի - մորը: Այս հասակի խմբի համար պրոլետարիատը պետք է գրավի մանկապարտեզները, մանկական հրապարակները, իսկ յեղածն իր հսկողությանը յենթարկի:

բ) Մեր գործունեության գլխավոր դաշտն է հանդիսանում բուն մանկական շրջանը. իսկ մտքով (9—12 տար.) — նյարդային համակարգությունը, նրա վոսկրները և մյուս գործարանները (որգանները) բավականին ամրացած են. նրա գործողությունները ռեֆլեկսներ (անդրադարձում) չեն, այլ և մտածողության հետևանք. նրա խաղի մեջ վորոշ ծրագիր կա, նպատակ. կազմակերպված և նպատակային խաղերի ժամանակն է այդ. Ուժեղ ձգտում է նկատվում որդաներ կազմելու և սեռերի բաժանում: Յերեխաները վերարտադրում են նախնական հասարակակարգը\*.) («Ավագակներ» և «Հնդիկներ» խաղերը):

\*) Գերնեյն ի նկատի չի ունենում արդիականությունը և հեղափոխական միջավայրը, վորը հարուստ նյութ է մատակարարում յերեխաների վորոշ բնագոյներ կազմակերպմանը (պիտներ, կարմիր բանակ, միտինդներ, ժողով, աշխատանքային խմբակներ և այլն): Բրոգենիտիքական սկզբունքը վորոշ չափով արտահայտվում է նայն Գերնեյի մանկավարժական տեսության մեջ:

Նրանք առաջնորդ են ընտրում և զորք կազմակերպում. խաղում են վիճակախաղի նման, չափում են ուշժերը. նրանք բռնված են ճանապարհորդների և հետազոտողների հետաքրքրությամբ. տնտեսություն են վարում և հավաքածուներ կազմում. նրանք խաղն ու աշխատանքը միացնում են բանջարանոցի ձևով և ձեռագործով:

Պրոլետարական յերեխան այդ հասակում է արդեն խրվում պրոլետարական մի կտոր հաց ձեռք բերելու գժվարությունների մեջ, փողոցի վտանգավոր տավորությունների շնորհիվ մարգրված, լսել է ու տեսել պրոլետարական թաղամասերում և զորանոցներում շատ բաներ, վոր «քաղաքավարի» բուրժուան ամթխածությամբ թազցնում նրանցից: Այս հասակում նրկատելի յե, վոր իրականության զգացողությունն ավելի յե զարգացած պրոլետարական յերեխայի մեջ, հաճախ ի հաշիվ նրա ստեղծագործական ֆանտազիայի և դիտողի հարցասիրության. Այս փաստերի վրա արժե ուշադրություն դարձնել յերեխաների. կոմունիստական խմբակներում:

Շուրջի, խաղերի, պարերի և հեքյաթներ պատմելու փոխարեն ավելի և ավելի առաջ է գնում ինքնուրույն խաղերի և աշխատանքների կազմակերպումն, ավելի հնարավոր դառնում ի-

րականության նախնական ծանոթությունը, (և վոչ թե բանվորական շարժման հեքյաթային պատմությունը), պրոլետարիատի տանջանքներով և պայքարով առաջացած հեղափոխությունը: Այն ձևը, վորով մենք անում ենք այդ, հասկանալի չէ, վոր հարմարվում է նրանց հասակին. ուստի առաջին տեղը բռնում են մրցման խաղերը և հերոսական պատմվածքները, ապա—մանկական թատրոնը, ձեռքի աշխատանքները, համապատասխան բացատրությունների հետ կապված եքսկուրսիաները և ժողովները, խմբակցություններն ու մեծերի դեմոնստրացիաներին մասնակցելը:

զ) 12 տարում արդեն նկատելի չեն դառնում, մանավանդ վաղ հասունացող պրոլետարիան յերեխայի մեջ սեռական հասունության արթնացման նշանները: Յերեխան կանգնած է պատանեկական հասակի շեմին. յերևան են զալիս դաստիարակության համար նոր նշանակություն ունեցող լուրջ մոմենտներ:

Սեռերի հակադրությունը փոխվում է յերկշոտ մոտիկության, վորը տղաների մեջ արտահայտվում է աղջիկներին հրելով, ճմթելով (կրսմթել). իսկ աղջիկները նրանց հանդեպ դառնում են շատ զգույշ և անմատչելի. թե մեկի և թե մյուսի կողմից փոխադարձ կոտրատվելով և նույն իսկ թեթև տանջելով է արտահայտվում:

Սեռական դաստիարակության պրոբլեմները նման հասակի առանձնահատկություններին է յենթակա. պրոլետարական յերեխայի ցանկությունները և ունակությունները ձգտում են կազմակերպվել և այդպես մասնակցել պրոլետարիատի պայքարին: Այժմ յերեխան հասունացել է, պատրաստ է իր խմբի ինքնավարության մեջ վորոշ պարտականություններ կատարելու. իբրև խելացի և կշռադատ պայքարող կարող է պրոպագանդ մղել, պրոլետարիատի պայքարին գիտակցաբար մասնակցել: Մեր նպատակն է այս դեպքում յերեխայի ռազմական հոգին սնել, դիտողությունը սրել, կենդանացնել նրա ակտիվը, սովորեցնել դիմացկունության, ուժեղացնել ինքնագործնեության ձգտումը, խնամքով պատրաստել առաջադրությունները: Այս հասակում մանկական խմբերը կոմունիստական պատանեկական կազմակերպության մեջ քաշելը նախապատրաստում է նրանց դուրս գալը դպրոցից և կովող ու աշխատող պրոլետարիատի շարքերն անցնելը:

Ե. Գերնիե

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՐԵԽԱՅԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական աշխատավորների համար յերեխայի ուսումնասիրության խնդիրը նոր է. սրա վրա յե կառուցվել մանկապարտեզների աշխատանքը հեղափոխության առաջին ուղիքում. բայց մանկապարտեզներում, այնուամենայնիվ, դաստիարակում եյին «միշակ նախադպրոցականին», խոսում եյին ընդհանրապես նրա հոգեկան ու ֆիզիքական առանձնահատկությունների մասին. և միայն հեղափոխության վեցիւրորդ տարում նախադպրոցական ավելի ուշագիւր աշխատավորները յեկան այն յեզրակացության, վոր հեղափոխության տարիներում նախադպրոցականի կերպարանքը բավականին փոխվել է անկասկած, կենցաղային ու սոցիալական փոփոխությունների ազդեցությամբ, վորը ծնել է հեղափոխությունը: Յերեխաների հետաքրքրությունն ու պատկերացումները հասարակական աշխատանքի շրջանում և շրջապատի կյանքից, հեղափոխության անցողաբարձից նույն հավաքելու փորձը միանգամայն խրատական հետևանքներ տվեց:

Յերեխան մանկապարտեզ է գալիս իր շրջապատի կյանքից տեղեկությունների և տպավորությունների ահագին պաշարով և այդ բոլորը իրականացնում է խաղերի և աշխատանքների մեջ: Գործարանն իր ամբողջ կյանքով արտացոլում է յերեխայի մեջ և արտահայտվում է նրա շինած դանդան ձևի շարժիչ մեքենաներով, շոգեմեքենաներով, գործարանային շենքերով: Մի մանկապարտեզում առանձնապես աչքի յե ընկնում յերեխաների հետաքրքրությունը դեպի ելեքտրական լուսավորությունը. շինում են առանց լուսամուտների տներ և խորհուրդ են տալիս նայել դռնից — ինչ մութն է. ապա մի կողմից հանում են մի աղյուս և տան հերսը լուսավորում: Տներում ջրհան խողովակներ են անցկացնում: Ջրաղացի մոտի մանկապարտեզում յերեխաները շինում են ջրաղաց ա) աթոռներով և հատակի խողանակով, վորովհետև խողանակը պտտվում է իր առանցքի շուրջը. բ) փայտե անիվով և տաշեղով, վերջինս պտտվում է: Մանածագործարանի կողքին գտնված մանկապարտեզում յերեխաները աթոռներով գործարան են շինում, վորտեղ շոր են գործում, և հենց այստեղ ել բաժանում:

Գործարանի՝ մանկատանը հասցրած ոգնությունը արտահայտվում է խաղի մեջ. մանկա-

պարտեզի կահ-կարասիները դարսվում ե և ուզարկվում գործարանի արհեստանոց, վերանորոգելու:

Գործարանային ակումբը, թատրոնը, կամենդանտի թուլյութություն, — ամեն ինչ կա յերեխաների խաղերի և աշխատանքների մեջ:

Հեղափոխական տոներ արտահայտող թեմաները արտահայտվում են մինչև տոները, ներկայացնում են մեծերի բարձր արամագրությունը, և տոնից հետո յերևան են գալիս ինչպես մանկան ապրումներ: Իրենց նկարներում և կավի աշխատանքներում ձևակերպում են զարգարված ելեքտրաբարձներ, յերեխաներով լիքը ավտոմոբիլներ, տոնի արտահայտությունը մանկապարտեզում լինում են մանկական տոները գործարանում, բանակումբում յերթ, զարգարված տներ ու փողոցներ, յերեխաները ինքնուրույն քայլերթ են կազմակերպում «Ինտերնացիոնալ» «Մենք համարձակ կովի կերթանք» և այլն յերգերի ու նվագի տակ: Կարմիր հրապարակը, վորպես հեղափոխության կենդրոն ձևակերպվում ե խաղի մեջ. այս տոնակատարության մեջ ե յերեխայի համոզմունքը հեղափոխական տոնի վեհությունը, հույզերի վերելքը:

Ահա թե ինչ ե գրում խմբավարը. «Ինձ մոտ բոլշևիկական տոն կրկին» — հայտարարեց

7 տարեկան Կոլիան: «Հարկավոր չե բոլշևիկյան, անվանակոչությունն ավելի լավ ե» — «Անվանակոչությունն ինչ ե, միայն ճաշ ե, Ելի. իսկ մենք ավտոմոբիլով կըգնանք կարմիր հրապարակ», բացականչեց Կոլիան. — «Դրոշակներով», — ավելացրին Լյովան ու Գոշան:

Լենինի անունը մոտ ե յերեխաներին և նրանց յերևակայության մեջ հյուսվում ե հասարակական կյանքի վորոշ մոմենտներով, յերեխաներին մատչելի ձևով: Այսպես, մեկ անգամ մանկապարտեզում յերեխաները հետաքրքրվում են, թե ով ե առաջին անգամ մտածել ադյուսից վառարան շինել. և համայնքը վորոշեց՝ Լենինը: Յերբեմի Լենինի դեմքը հեքիաթային բընույթ ե կրում նույն մանկապարտեզում՝ «Լենինը թնդանոթի վրա նստած գնում ե կարմիր հրապարակ»:

«Սերյոժա, այս ինչ ե, քեզ համար Լենինն ինչքան մեծ ե», հարցնում ե Կոլիան, զարմացած Լենինի մեծությամբ. «Նա հսկա յե, ինչ ե» — «Այո, հսկա յե», առանց զայրանալու պատասխանում ե Սերյոժան (6 տարեկան):

Ընտանիքի ծանր, կոպիտ նախապաշարումները ճնշում ե յերեխային, բայց նրա մեջ կըրոնական ապրումներ չեն ստեղծում: Որինակ ե ծառայում այն, վոր մի մանկապարտեզում յե-

կեղեցական արժեքավոր իրերի գրավման առիթով, առավոտյան 7 տարեկան մի աղջիկ—Տանյան հայտարարում է, վոր «Յերեկ յերկու յեկեղեցի յեն կողոպտել և բոլոր վոսկիները տարել»։ «Ձեն կողոպտել, զայրանում է վեց ու կես տարեկան Կոլիան, այլ գրավել են, վորովհետև սովյալներին հաց է հարկավոր»։ Տանյան չհանգստացավ. «այսօր յերկուսն էլ կրգողանան»։ և նայելով բարկացած Կոլիային, ուղղեց. «կրվերցնեն»։ «Տղաները նրանց վրա քարեր եյին գրցում»։ Ղեկավարունին միջամտելով՝ հարցրեց. «Իսկ յեթե տղաներն իրենք քաղցեն. չէն ափսոսա, վոր իրենք խանգարել են վոսկի տանողներին»։ «Իհարկե կըխղճան»,—ամեն կողմից ձայներ լսվեցին։ Սովյալների նահանգից մի թրքունի թափա անունով Տանիայի վրա հարձակվեց. «Յեթե սոված մարդը հաց չունի, պետք է մեռնի, ինչ է», զայրացած պնդում է նա. նրա քույր Տուրլին լաց յեղալ, ծանր պատկեր ստացվեց, Լյովան մխիթարում էր Տուրլինին. «Յես վոր մեծանամ, ամբողջ վոսկին կրվերցրենեմ և քեզ կըտամ»։ Յերեխաները սովյալների կողմն եյին, իսկ Տանիան, ըստ յերևույթին, բարեկամների խոսակցության տպավորության տակ այլ կարծիքի էր։ Մյուս ուրը նա ցած ձայնով խոսում էր մի աղջկա հետ յեկեղեցուց իրեր

տանող ավտոմոբիլների մասին։ Յերբ յերեխաները խնդրեցին վորևե բան պատմել, նրանց պատմեցին «Նեյլո և Պատրաշը»։ պատմությունը վերջանում է նրանով, վոր Նեյլոն սովից մեռնում է. տպավորությունը չափազանց ուժեղ էր։ Յերեխաները սթափվելով՝ հարցրին թե ինչո՞ւ վոչ վոք նրան չկերակրեց. Կոլիան նոթերը կիտած ասաց. «Յես յեկեղեցուց կրվերցնեյի խաշը և կըծախեյի»։ «Իսկ յես քեզ միլիցիա կըտանեյի» ասաց Վասիան. «Ինչո՞ւ, միլիցիա, չե՞ վոր յես սովյալների համար եյի անում»։ Խմբավորըն այդ ուրը չեր միջամտում, տպավորությունն ուժեղ էր։ Յերեխաների մտքերն ինքնաբերաբար եյին ուղղվում դեպի յեկեղեցական ավելորդ վոսկին։ Այդ էլ բավական էր։

Ծնողները յերեխաներին յեկեղեցի յեն տանում և հաճախ հարց դնում, վոր մանկապարտեզներում բացակայում է աղոթքը և տիրամոր պատկերը, բայց յերեխաները սահմանափակվում են խաղերի մեջ ծնողների վեճերը (կրոնական հարցերի մասին) ու անվերջ նախապաշարումները վերարտադրելով։

Յերեխայի մտաշրջանը մեզ հեղե թվում, յերբ նա չի տարբերում գույները, չգիտե վորոշել աջ և ձախ ձեռքը, յերբ 6—7 տարեկան հասակում հաշիվ չգիտե, սակայն պրոլետարական յերեխան գիտե հոր և մոր աշխատանքը, նրանց վերաբերմունքը. շատ լավ ճանաչում է փողոցը և յուրատեսակ վերլուծում։ Նրա մեջ խոսում է իր մանկական աշխարհայացքը։

Պրոլետարական մարտիկի դաստիարակութեան մեջ ավելի քան գնահատելի յե՛ պրոլետարական իդեալների տեսակետից՝ ողնել յերեխային վերլուծելու և կարգավորելու համար յուրացրած տպավորութիւնները հոսանքը. — ահա մանկավարժի հիմնական նպատակը:

Խնչպես ցույց են տալիս ղեկավարների գրի առածները, յերեխան ինքն ե գնում (խաղերի և աշխատանքի մեջ) յուրացրածի ստեղծագործական վերամշակման ուղիներով, իր ռեակցիաներով և վերաբերմունքով դեպի ընկերները, նա ի հայտ ե բերում այն բոլորը, վորոնց վրա կարելի յե հիմնվել մանկական կողմնակի վազմակերպելիս, ընկերական համերաշխութիւն դաստիարակելու ժամանակ:

Յերեխային չպետք ե կտրել կյանքից, մանկան բնական կյանքը միմիայն մանկապարտեզում ամփոփելով, այլ բանվորական միջավայրի պահանջներն հարմարեցնելով յերեխայի պահանջներին, ամրացնել նրա բնավորութեան և պատկերացումների մեջ այդ միջավայրի դրական կողմերը: Դրանց հետ անցնել նույնպես գրել կարդալը, հաշիւը, և այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե մանկապարտեզում:

Ս. Լ. ՄԱՐԿՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐԴՎԱ

\*) Այժմյան կախաղաղմիջակայի շարակերպների վերաբերմամբ ղեկիւն արդիականութիւնը, հեղափոխական քաղաքական տոները, մանկավորացիւն պետիւն և այլններ. կազմակերպութիւնը հարուստ նյութ կա նաեւ մեզ տակնաթիւ նախադպրոցական հիմնարկներում, վորի մշակումը պետք ե հերթական խնդիր համարվի:

<< Ազգային գրադարան



NL0227419

45. 596